

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ ԸՆԴՈՒՄԱՆ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐ ԴԻՏԻ ԸՆԴՈՒՄԻ ԴԱՔԱՆՈՐԻԱՅԻ ԲՆՆՈՒԹԵԱՆՆԵՐ ՅԱԶՈՂԱԾ ԲՈՒՈՐ ԱՇԿԵՐՏՆԵՐԸ

Սուրիոյ համալսարաններ ընդունման պայմանները ճշդող բարձրագոյն Յանձնաժողովը որոշեց 2020-2021 ուսումնական տարեշրջանին համար սուրիական համալսարաններ եւ ուսումնարաններ ընդունիլ բոլոր անոնք, որոնք յաջողած են պաքալորիայի քննութեանց եւ որոնք թիւը կը հասնի 139.588 շրջանաւարտ-շրջանաւարտուհիի, յարգելով անոնց աշխարհագրական տարածութիւնը, որպէսզի կարելի եղածին չափ մեծ



թիւով շրջանաւարտներ ներգրաւուին իրենց նահանգներու համալսարաններուն եւ ուսումնարաններուն մէջ:

Սուրիոյ վարչապետ երկրչփ. Արնուս շեշտեց, որ անհրաժեշտ է հաւասարակշռութիւնը պահել Համալսարաններու ընկալման եւ ուսման որակին միջեւ, ինչպէս նաեւ լաւապէս օգտագործել մարդկային պաշարները ռազմավարական առողջ տեսլականով:

ՄԱՆԱԶԴ

ՀՀԴ Բիւրօն խոր վիշտով կը տեղեկացնէ վաստակաշատ դաշնակցական, մտաւորական, երկարամեայ կուսակցական գործիչ ընկեր Վարանդ Փափագեանի մահը:



Ընկեր Վարանդը մտաւորականի իր բարձր մակարդակով, անխոնջ աշխատանքով, անմնացորդ նուիրումով ծախսեց իր ունեցեալ դաշնակցական գործի յառաջընթացին մէջ: Ան օրինակ էր՝ կը մնայ որպէս այդպիսին՝ դաշնակցական

սերունդներուն համար:

ՀՀԴ-աշնակցութեան անունով մեր ցաւակցութիւնը կը յայտնենք ընկեր Վարանդին ընտանիքին, հարազատներուն եւ ընկերներուն:

ՀՀԴ ԲԻՐՕ
12 Մեկտեմբեր 2020

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՆԴԱՅԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐՈՒ ԴԱՇՏՈՆԵՒՈՒԹԵԱՆ

«Հայաստան» համահայկական հիմնադրամը հալէպահայ ուսուցիչներու ընկերային վիճակի բարելաման ուղղուած ծրագիրով նիւթական օգնութիւն ցուցաբերեց Հալէպի ՀԲԸՄ Լազար Նաճարեան-Գալուստ Կիւլպէնկեան վարժարանի, Ազգային Զարէն Եփփէ ճեմարանի, Կիլիկեան ճեմարանի, Կրթասիրաց Ս. Չեմպէրճեան Երկրորդական վարժարանի, Հայ Աւետարանական Բթել Երկրորդական վարժարանի, Միսիթարեան վարժարանի, Ազգային Միացեալ Նախակրթարանի եւ Չուարթնոց վարժարանի մօտաւորապէս 370 ուսուցիչներուն եւ վարչական անձնակազմի անդամներուն:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԿԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԴԱՅԱՅՈՒԹԵԱՆ

Հինգշաբթի, 17 Մեկտեմբեր 2020-ին, առաւօտեան ժամը 10:00ին, Ս. Աստուածածին եկեղեցւոյ ներքնասրահին մէջ մեկնարկը կատարուեցաւ Հայաստանի Հանրապետութեան կողմէ ուղարկուած մարդասիրական օժանդակութեան բաշխումին: Օժանդակութիւնը պիտի բաշխուի 4000 հալէպահայ ընտանիքի:

Բաշխման առաջին հանդիպումին ներկայ էին Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբազան Եպս. Չօպուեան, Բերիոյ Թեմի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արհի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան, Սուրիոյ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Հայաստանի Հանրապետութեան Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան, Սուրիահայութեան Շտապ Օգնութեան եւ Վերականգնումի Հալէպի Գործադիր Մարմինի անդամներ, ազգայիններ եւ քահանայ հայրեր:



Հանդիպումը սկսաւ հայ երեք հոգեւոր պետերու Տէրունական աղօթքով: Բացման խօսքով հանդէս եկաւ Հայաստանի Հանրապետութեան



Հալէպի Գլխաւոր Հիւպատոս Արմէն Սարգիսեան: Ան ըսաւ, որ Հայաստանի Հանրապետութիւնը, նկատի ունենալով Սուրիոյ ժողովուրդին տնտեսական ծանր վիճակը, որոշեց նիւթական օժանդակութիւն յատկացնել այս անգամ հալէպահայ ընտանիքներուն, հետագային նաեւ Սուրիոյ մնացեալ նահանգներու հայ ընտանիքներուն:

Ապա յիշեց, որ օժանդակութեան նպատակը բարոյական է, հայրենիքը՝ **Ժիրայր Կարապետեան**
Շաբ.՝ 12

ԱԶԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՎԵՐԱՄՈՒՏԻՆ ՄԵԿՆԱՐԿԸ ԿԱՏԱՐՈՒԹՅԱՒ

Երեքշաբթի, 15 Մեկտեմբերին Հալէպի Ազգ. Զարէն Եփփէ ճեմարանի 2020-2021 ուսումնական տարեշրջանի մեկնարկը յայտարարուեցաւ:

Ճեմարանի աշակերտները դիմաւորուեցան Տնօրէնութեան եւ Խնամակալութեան կողմէ:

Ուսումնական տարին սկսաւ Տէրունական աղօթքով: Ապա ճեմարանի տնօրէն Յակոբ Զիլեճեան բարի գալուստ մաղթեց աշակերտներուն, յայտնելով որ տարին կը սկսի օրինաւոր դասաւանդութեամբ, շաբաթական հինգ օրերու եւ օրական վեց դասապահերու դրութեամբ, յարգելով պսակածեւ ժահրի համաճարակէն նախագոյնացման բոլոր պայմանները:

Աւելցնենք, որ վերամուտի նախօրէին ճեմարանի կառոյցը ամբողջութեամբ հականեխուեցաւ:

Այս տարի ճեմարան կը յաճախեն աւելի քան 350 հայ աշակերտներ, հայեցի մթնոլորտի մէջ ստանալու ուսում եւ ազգային դաստիարակութիւն, դառնալու ազնիւ, ուսումնասէն մարդ եւ գիտակից քաղաքացի:



Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ՀԵՄ-ի ԵՐԹԸ «ՅԱՆՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԱՌԱՋԱԴԷՍ ԿՐԹՈՒԹԵԱՆ» ԿԱՐԳԱՆՍՈՒՎ

ՀՅԴ Հայաստանի Երիտասարդական Միությունը 16 Սեպտեմբերին, «Յանուն Ազգային և Յառաջադեմ Կրթության» խորագիրը կրող երթ կատարեց:

Երթը սկսաւ Մատենադարանի յարակից տարածքէն և անցնելով Մաշտոցի պողոտան, Ամիրեան փողոց վերջ գտաւ կրթության, գիտության, մշակոյթի և մարմնակրթության նախարարության (ԿԳՄՍ) շէնքին դիմաց:

Երթին մասնակիցները՝ ԿԳՄՍ ոլորտներուն մէջ տիրող քառույթ, բարեփոխումներու անուան տակ վարուող ապագային քաղաքականութեան համար պահանջեցին Արայիկ Յարութիւնեանի հրաժարականը:



«Սա սկզբունքներու պայքար է, սա ապագայի և անցելի պայքար է և մենք բնականաբար պետք է հասցնենք տրամաբանական ակարտին», յայտարարեց ՀՅԴ ՀԵՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ Զրիստիէ Վարդանեան՝ երթի մեկնարկէն առաջ:

Լրագրողներու հարցումներուն պատասխանելով Զրիստիէ Վարդանեան ըսաւ, որ մենք հայեր ենք, Հայաստանի բնակիչներ ենք, մարդիկ, որոնք Հայաստանը ընտրած են որպէս գործունէութեան և կեանքի միջավայր և Հայաստանով պայմանաւորուած է իրենց ներկան ու ապագան:

Արգիշտի Գեորգեանի համոզումով՝ բոլոր հիմնական և կարեւորագոյն փոփոխութիւնները պետք է սկիզբ առնէին մեր կրթական համակարգէն, որովհետեւ կրթութեան, գիտութեան, մշակոյթի բնագաւառին մէջ մենք, արդէն այսօր, պետք է նշմարելիք մեր լուսաւոր ապագային յստակ պատկերը:

«Սակայն ի՞նչ ունինք մենք անոր փոխարէն մեր կրթութեան գիտութեան, մարմնակրթութեան և մշակոյթի ոլորտներուն մէջ: Մենք չունինք այս ոլորտներուն առնչուող պետական ռազմավարութիւն», ըսաւ ան: Այնուհետեւ երթի մասնակիցները երգեցին Սարգսրապատի հերոսամարտին նուիրուած երգը:

ՉՅՐԱՊ ՄՆԱՅԱԿԱՆԵԱՆՆ ՌԷԳԻՊՏՈՍԻ ՆԱԽԱԳԱՆ ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԾ ԵՆ ՀԱՅ-ԵԳԻՊՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



«Արմենփրես».- Պաշտօնական այցելութեամբ Եգիպտոս գտնուող ՀՀ արտաքին գործոց նախարար Չօհրապ Մնացականեան 14 Սեպտեմբերին ընդունուած է Եգիպտոսի նախագահ Ապտուլ Ֆաթթահ ալ Սիսիի կողմէ:

Նախարար Մնացականեան խորին երախտագիտութիւն յայտնած է ջերմ ընդունելութեան համար՝ վերահաստատելով հայկական կողմին պատրաստակամութիւնը քայլեր ձեռնարկելու հայ-եգիպտական գործակցութեան ընդլայնման և ամրապնդման համար: Իբրեւ գործակցութեան գերակայ ուղղութիւններ՝ զրուցակիցները առանձնացուցած են ելեկտրոնային կառավարման, դեղագործութեան, զբօսաշրջութեան և գիտակրթական ոլորտները:

Հայաստանի ԱԳ նախարարը և Եգիպտոսի նախագահը բարձր գնահատած են աւանդական բարեկամութեան և փոխադարձ յարգանքի վրայ հիմնուած հայ-եգիպտական յարաբերութիւնները՝ արժէւորելով Եգիպտոսի համայնքի կամրջող դերակատարութիւնը երկու երկիրներու և ժողովուրդներու միջեւ կապերու ամրապնդման մէջ: ՀՀ ԱԳ նախարարը արժէւորած է Եգիպտոսի պատմական դերը և այժմու փորձառութիւնը կրօնական բազմազանութեան և համերաշխութեան պահպանման ու ամրապնդման մէջ:

Զրուցակիցները քննարկած են տարածաշրջանային և միջազգային խաղաղութեան ու անվտանգութեան առնչուող հարցեր: ՀՀ ԱԳ նախարարը մտահոգութիւն յայտնած է Մերձավոր Արեւելքի և Հարավային Կովկասի մէջ անկայունութիւն արտահանելու փորձերու գծով՝ կարեւոր համարելով խաղաղութեան և անվտանգութեան պահպանման համար միջազգային գործակցութիւնը:

ԱՐՅԱՍԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ «ԱՏՐՊԷՅՃԱՆ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԽԵՂԱԹԻՐՈՒՄ ԴԱՏԿԵՐԱՅՈՒՄՆԵՐ ՈՒՆԻ»

Արցախի Հանրապետութեան Արտաքին Գործոց նախարարութեան տեղեկատուութեան և հասարակութեան հետ կապերու վարչութիւնը մեկնաբանած է Ատրպեյճանի Արտաքին Գործոց նախարարութեան կողմէ վերջերս ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն ուղղուած բողոքը, որուն մէջ փորձ կը կատարուի լիբանանահայ քանի մը ընտանիքներու Արցախի Հանրապետութիւն տեղափոխուիլը ներկայացնել իբրեւ միջազգային մարդասիրական իրաւունքի չափանիշներու խախտում, և յայտնած, որ աղէտի պայմաններուն մէջ յայտնուած մարդոց Արցախի իշխանութիւններուն կողմէ բնակարաններու տրամադրումը իբրեւ միջազգային մարդասիրական իրաւունքի չափանիշներու խախտում ներկայացնելու ազդեցական կողմի բազմաթիւ փորձերը կը վկայեն ո՛չ միայն միջազգային փաստաթուղթերու կանխակալ մեկնաբանութեան, այլեւ, առհասարակ, մարդասիրութեան վերաբերեալ խեղաթիւրուած պատկերացումներու մասին:



որ Լիբանանի հայ համայնքը պահպանուի, սակայն, միեւնոյն ժամանակ, իրենց ինքնիշխան իրաւունքի շրջանակներում անհրաժեշտ աջակցութիւն կը ցուցաբերեն ծանր իրավիճակում յայտնուած մեր հայրենակիցներին, ովքեր ցանկութիւն կը յայտնեն գալ և հաստատուել մեր հանրապետութիւնում:

«Մարդասիրական աղէտի պայմաններում յայտնուած մարդկանց Արցախի իշխանութիւնների կողմից բնակարանների տրամադրումը որպէս միջազգային մարդասիրական իրաւունքի չափանիշների խախտում ներկայացնելու ազդեցական կողմի բազմաթիւ փորձերը վկայում են ո՛չ միայն միջազգային փաստաթղթերի կանխակալ մեկնաբանման, այլեւ, առհասարակ, մարդասիրութեան վերաբերեալ խեղաթիւրուած պատկերացումների մասին: Հակամարտութեան և դրա կարգաւորման ողջ ընթացքում ատրպեյճանական իշխանութիւններն ի ցոյց են դնում մարդասիրական խնդիրների նկատմամբ իրենց բացայայտ քամահրական վերաբերմունքը՝ դրանք օգտագործելով միայն սեփական շահի համար՝ քողարկելու իրենց իրական՝ դատապարտելի նպատակները: Այդ մասին է վկայում անելի քան երեք տասնամեակ շարունակ Ատրպեյճանից կէս միլիոն հայ փախստականների իրաւունքների լկտիաբար անտեսումը, որոնց վտարումն ուղեկցւում էր զանգուածային սպանութիւններով և դաժան ջարդերով, սակայն առայսօր պաշտօնական Պաքուն յամառօրէն իրաժարում է ճանաչել իր պատասխանատուութիւնը նրանց ողբերգական ճակատագրի համար:


«Արմենփրես»ի հաղորդումով՝ մեկնաբանութեան մէջ ըսուած է.

«Արցախի Հանրապետութեան իշխանութիւններն իրենց պարտքն են համարում օգնութիւն ցուցաբերել տարաբնոյթ աղէտների և ճգնաժամերի պատճառով դժուար իրավիճակում յայտնուած հայրենակիցներին: Աւելին՝ մարդասիրական աղէտներին արձագանգելը գտնուում է ողջ միջազգային հանրութեան ընդհանուր պատասխանատուութեան ծիրին մէջ, որի բաղկացուցիչ մասն է Արցախի Հանրապետութիւնը՝ անկախ նրա՝ ժամանակաւորապէս միջազգայնօրէն չճանաչուած քաղաքական կարգավիճակից: Մարդասիրական օգնութիւն ուղարկելով Լիբանան և ապաստան տրամադրելով նրանց, ովքեր Պեյրութում տեղի ունեցած աներից պայթումին արդիւնքում կորցրել են իրենց տները՝ պաշտօնական Ստեփանակերտը ուժերի ներածին չափ իր ներդրումն է ունենում միջազգային հանրութեան ընդհանուր ջանքերում՝ միտուած մարդասիրական իտեայնների կենսագործմանը:

«Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները շահագրգռուած են,

«Անթոյլատրելի ենք համարում, որ Պեյրութի մարդասիրական աղէտից տուժածները դառնան ատրպեյճանական իշխանութիւնների յարձակումների թիրախ և քաղաքական շահարկումների առարկայ: Վերահաստատում ենք, որ Արցախի Հանրապետութեան իշխանութիւններն այսուհետեւ ևս անհրաժեշտ օգնութիւն կը ցուցաբերեն իրենց բնակութեան վայրերում դժուարին իրավիճակում յայտնուած մեր բոլոր հայրենակիցներին»:

ԼԻՊԻՅԱՆ ԶԻՆԱԴԱՐԱՐԸ ԿԸ ԶԱՅՐԱՑՆԵ ԹՈՒՐԵՒԱՆ ԵՒ Կ'ԱՄՐԱԳՐԵ ԱՆՈՐ ԳՐԱԸ ՊԱՇՏԱՎՅԻ ԿՐԱՅ



Սարգիս Գասարյան

21 Օգոստոս 2020-ին, Լիպիոյ մէջ քաղաքացիական պատերազմի կողմերուն զինադադարի որոշում գոյացնելը Թուրքիոյ համար ոչ-գոհացուցիչ անակնկալ մը հանդիսացաւ, որովհետեւ Թուրքիա զինադադարի որոշումին վերջին տեղեակ եղողներէն մէկը եղաւ, հակառակ Լիպիական տագնապին մէջ ազդեցիկ կողմ համարուելուն:

Մինչ կարգ մը պետութիւններ եւ միջազգային հաստատութիւններ, ինչպէս ՄԱԿ-ը, Արաբական Լիկան, Բրիտանիան, Ֆրանսան, Եգիպտոսը, Արաբական Միացեալ Եմիրութիւնները, Սեուտական Արաբիան, Իտալիան իրարայաջորդ հաղորդագրութիւններով խրախուսեցին զինադադարը, թրքական դիւանագիտական կողմերն ու լրատուամիջոցները լուռ մնացին՝ սպասելով «բարձրագոյն դրան» կարծիքին: 48 ժամ «դրական լուր» պահելէ ետք, թրքական մամուլը բացայայտեց երկրին մօտեցումը. Անգարան, անտեղեակ ըլլալով համաձայնութեան, գոհ չէ անոր արդիւնքէն, փաստօրէն ո՛չ վերջին օրերու նախագահին արտասանած ճառերուն մէջ, ոչ ալ նոյնիսկ արտաքին գործոց նախարարին հրապարակած իրարայաջորդ հաղորդագրութիւններուն մէջ յիշատակուած մը անգամ եղաւ զինադադարին: Այս առիթով, առաջին յօդուածը հրապարակուեցաւ 24 Օգոստոս 2020-ին, Երտոզլանի համակիր «Յապեր Թուրք» պատկերասփիւռային կայանի կայքէջին վրայ, լրագրող Չեթին Չեթինարի ստորագրութիւնը կրող յօդուածով: Չեթինար կը շեշտէր, որ համաձայնութիւնը ձախողութեան պիտի մատնուի եւ Լիպիան պիտի քայքայէ: Միւս կողմէ ընդդիմադիր լրատուամիջոցներու կայքերուն վրայ հրապարակուած յօդուածներ հաստատեցին, որ յիշեալ համաձայնութիւնը ձախողութեան պիտի մատնէ Լիպիոյ մէջ Թուրքիոյ արտաքին քաղաքականութիւնը, այնպէս ինչպէս տեղի ունեցաւ Սուրիոյ, Եգիպտոսի եւ Միջին Արեւելքի մէջ:

ՌՈՒՍԱԿԱՆ «ՊԱՏԻՑ» ԶԱՖԹԱՐԻՆ

ԱՄՆ-ի եւ Եւրոպական Միութեան առաջնորդին՝ Գերմանիոյ ղեկավարութեամբ Լիպիոյ մէջ զինադադարի համաձայնութիւնը գոյացաւ յետ քաղաքացիական պատերազմի կողմերուն եւ անոնց զօրակիցներուն միջեւ բացայայտ եւ գաղտնի հանդիպումներու: Թուրքիան գերծ կացուցուեցաւ այս գործընթացէն՝ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարին եւ Լիպիոյ մէջ ԱՄՆ-ի ղեսպանին յաճախակի



հանդիպումներուն որպէս արդիւնք: Զեռացումին պատճառը այն էր, որ յիշեալ երկու պետութիւնները եւ Լիպիոյ տագնապին առնչուող բոլոր կողմերը տեղեակ էին, որ Թուրքիա զինադադարի որոշումին դէմ է: Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուտ Չաւուշօղլուն պաշտօնապէս յայտարարած էր այս մասին Եգիպտոսի նախաձեռնած «խաղաղութեան նախաքայլ» խորհրդածրոյցին ըսելով. «Այս նախաձեռնութիւնը (զինադադար-ի մը) մեզի համար մեռեալ կը համարուի նախքան ծնունդը, որովհետեւ ճշմարտացի չէ եւ իրականութեան չի համապատասխաներ»:

Կասկածէ վեր է, որ Թուրքիոյ ազգային շահերը կը հակադրուին Լիպիոյ տագնապին առնչուող պետութիւններու շահերուն, որովհետեւ Անգարա կը միտի Լիպիոյ պատերազմը շահարկել եւ չէ հետքըրուած անոր հետեւանքներով, բացի եթէ Լիպիոյ Ազգային Զամաձայնութեան Կառավարութեան նախագահ Ֆայէզ Սարրաճ յաջողի Լիպիոյ ամբողջ աշխարհագրութիւնը իր վերահսկողութեան տակ առնել, ինչ որ անկարելի է:

Այս միտքը կը հաստատէ նաեւ թուրք քաղաքական անկախ գործիչ, ռուս-թրքական արտաքին քաղաքականութեան մասնագետ Այտըն Սեզեր, երբ «Ալ Նահար ալ Արապի» թերթին կը յայտնէ. «Թուրքիա անհանգստացած է զինադադարի որոշումէն, որովհետեւ համաձայնութեան յօդուածները կը հակասեն Թուրքիոյ շահերուն», շեշտելով, որ համաձայնութիւնը գուտ ռուսական որոշում է, իսկ Մոսկուա տարբեր ամեն միջոցի դիմած է յաջողցնելու գայն:

Թրքական «Մետիա Կիւնտեմ» քաղաքական կայքի յօդուածագիր Սեզեր

կը պարզէ, որ «Թրքական հովանաւորութիւնը վայելող լիպիական Ազգային Զամաձայնութեան Կառավարութեան Թրիփոլիի վրայ հաստատած վերահսկողութիւնը, իրականութեան մէջ, ռուսական պատասխան մըն էր Զաֆթարին՝ զինադադարի որոշումը չստորագրած Մոսկուայէն մեկնելուն համար: Յօդուածագիրին համաձայն, Ռուսիա, Թուրքիա եւ Լիպիական յիշեալ կառավարութիւնը համաձայնած էին «Վակնըր» զինուորական ընկերութեան ապահովական ուժերը հեռացնել Թրիփոլիէն եւ ճաֆրա ուղարկել, որպէսզի Սարրաճին առիթ ընծայուի Թրիփոլին իր հսկողութեան տակ առնելու՝ թրքական ինքնաթիռներու եւ թուրք զինուորական խորհրդատուներու զօրակցութեամբ, ուստի Սարրաճի յառաջխաղացքին հիմնական պատճառը Ռուսիոյ շրջանէն քաշուիլն էր»:

Սեզերի համաձայն, Ռուսիա յաճախակի փորձեր կատարեց Լիպիոյ մէջ հակամարտող կողմերը զինադադարի հրաւիրելու. սա յաջողեցաւ Զաֆթարի ճակատին վրայ, սակայն դէմ յանդիման եկաւ Սարրաճի ընդդիմադիրներուն եւ Թուրքիոյ մերժումին: Աւելի ուշ Ռուսիա սկսաւ պատուիրակութիւններ ուղարկել Թուրքիա՝ բանակցութիւններ վարելու թրքական կողմին հետ: Այս բոլորին որպէս արդիւնք Անգարա յայտարարեց, որ Լիպիոյ մէջ զինուորական լուծումը ապարդիւն է եւ տագնապը կարելի է լուծել քաղաքական բանակցութեամբ: Սեզերի համաձայն, Թուրքիա իր յօժար կամքով չընդունեց զինադադարի որոշումը, այլ Ռուսիոյ ճնշումին հետեւանքով իր համամտութիւնը յայտնեց, քանի որ չընդունելու պարագային Թուրքիա պարտութեան պիտի մատնուէր: Ըստ երեւոյթի Թուրքիա ուշ ընդունեց որոշումը: Այս պատճառով ալ Անգարա պատժուեցաւ եւ անտեղեակ մնաց Լիպիոյ մէջ գարգացող քաղաքական վերջին բեմագրութենէն, որուն ի պատասխան Թուրքիա շուռ տուաւ Լիպիոյ մէջ իր քաղաքական քարտերը:

ԹՈՒՐԵՒԱՆ ԶԻՆՈՒՐԱԿԱՄՆ ԼՈՒԾՈՒՄ ԿԸ ՆԱԽԱՏԵՍԵ

Սեզերի համաձայն, մինչեւ այսօր Լիպիոյ տագնապէն առաւելագոյն օգտուողը Թուրքիան է, շնորհիւ Սարրաճի կառավարութեան հետ իր բանակցութիւններուն, որոնցմով ան ձեռք ձգեց ծովային նաւահանգիստ մը, զինուորական խարխիս մը, ինչպէս նաեւ նիւթական հասոյթ՝ յանուն թրքական լիբիայի ամրակառուցման, որուն կողքին ծովային հարստութիւններէ օգտուելու փոխհամաձայնութիւններ՝ «թրքական կապոյտ հայրենիք» ծրագիրին որպէս լրացում: Լրատուամիջոցներ յայտնեցին նաեւ, որ Լիպիական կեդրոնական դրամատունը Ֆինանսաւորեց Թուրքիոյ նախագահին արտաքին եւ ներքին քաղաքական քարոզարշաւները:

Թուրքիան խորքին մէջ տագնապի զինուորական լուծումը կը շեշտէ՝ ընդլայնելու իր ակնկալութիւններուն առաստաղը, որուն համար կը շահագրգռէ նաեւ Թուրքիոյ հանրային կարծիքը՝ լիպիացի եղբայրներուն հետ շրջանի հարստութիւնները բաժնեկցելու, թրքական ընկերութիւնները Լիպիոյ վերականգնումի շահեկան գործարքներու առաջնորդելու, «կապոյտ հայրենիք» թրքական ծրագրի փոխարէն օգտուելու խոստումներով, փոխարէնը Երտոզլան կը փորձէ լուսարձակներէ հեռու պահել իր ներքին տնտեսական եւ արտաքին քաղաքական ձախողութիւնները:


Այս բոլորին լոյսին տակ, կը թուի որ զինադադարէն տուժած Թուրքիոյ քաղաքականութիւնը յառաջիկայ օրերուն պիտի հիմնուի Լիպիոյ ներքին հարցերու հրահրման եւ Թուրքիոյ համախոհ, բայց անհնազանդ տարրերէն, գործիւնակ՝ Սարրաճէն, ձեռքբազատման քայլերուն վրայ, որովհետեւ վերջինս ոչ միայն համաձայն գտնուեցաւ զինադադարին առանց Թուրքիոյ կարծիքը շօշափելու, այլեւ խորհրդակցեցաւ Փարիզի՝ ՆԱԹՕ-ի, Եւրոպական Միութեան եւ Միջին Արեւելքի մէջ Թուրքիոյ դիտարկած թշնամիին հետ:

Լիպիական ներքին հարցերը հրահրելու Թուրքիոյ քաղաքականութեան առաջին նշույլները երեւան եկան Լիպիոյ Զամաձայնական Կառավարութեան ներքին գործոց նախարար Պաշաղայի Թուրքիա այցելութենէն, առանց խորհրդակցելու Սարրաճի հետ, փոխարէնը անոր պաշտօնը առժամաբար կախեալ համարելու Սարրաճի նախնական որոշումէն, ապա այդ որոշումը Թուրքիոյ ճնշումին ներքոյ չեղեալ համարուեց: Միւս կողմէ ԱՄՆ-ի պաշտպանութեան նախարարութեան գեկոյցները անգամ մը եւս լուսարձակի տակ կը բերեն Լիպիոյ մէջ Թուրքիոյ եւ անոր Սուրիայէն Լիպիա գործուղած զինեալ ահաբեկիչ գործակալներուն վտանգը, ինչ որ կրնայ Թուրքիոյ դէմ քաղաքական նոր բեմագրութիւններու անակնկալ դրոյթներ ստեղծել:

«Ալ Նահար»
Հայերէնի թարգմանութիւնը՝ «Գանձասար»ի

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Ղազարեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՅՈՒՇԻԿ ԳԱԶԱՐԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի (դռնփակ, միայն քահանաներուն եւ դպրաց դասուն ներկայութեան) Կիրակի, 20 Սեպտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Բառասնից Մանկանց Մայր Եկեղեցոյ մէջ, Սպիլի-Հայէպ:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Յաջող շաբաթ է բոլոր անոնց համար, ովքեր կարճ ժամանակուան մեջ մեծ գումար վաստակելու նպատակ կը հետապնդեն:



Ցուլ

Շաբթուան առաջին կիսուն անյաջողութիւններու շղթան կը հետապնդէ ձեզ ամէն տեղ: Երկրորդ կիսուն դրական միտումներու ազդեցութիւնը կը ծաւալի: Յաջող գործարք մը կը կնքէք:



Երկուորեակ

Ձեր ստեղծագործական ներուժը, ինքնադրսեւորման փափաքը նոր թափ կը ստանան: Յանդուգն քայլեր կ'առնէք եւ դրական արդիւնքներ ձեռք կը ձգէք:



Խեցգետին

Ձեր յարաբերութիւնները ներդաշնակ են: Այս շաբաթ նախաձեռնող եղէք, դժուարութիւնները կարելի է յաղթահարել աշխատանքով:



Առիւծ

Ուշադիր չէք, ինչ որ ձեզ լուրջ հարցերու դէմ յանդիման կրնայ դնել: Հաշիւներու մէջ վրիպումներ թոյլ կու տաք, բծախնդիր եղէք եւ ականջ տուէք փորձառու մարդոց խորհուրդներուն:



Կոյս

Ձեր անձնական կեանքին մէջ նշանակալի փոփոխութիւններ կ'ակնկալուին: Արագ որոշում գոյացնելու ճկունութիւն ունեցէք:



Կշիռք

Լարուած շաբաթ մը ձեզ հ կը սպասէ: Չգացական ձեր կեանքը անկայուն է: Կասկածամիտ մի՛ ըլլաք:



Կարիճ

Բանավեճերու ընթացքին մի՛ քաշուիք ձեր անձնական կարծիքը պնդելէ, եթէ իրաւացի էք, ձեզ հ հանդէպ մարդոց վստահութիւնը կը կրկնապատկուի:



Աղեղնաւոր

Հանգիստ, հաճելի շաբաթ մը ձեզ հ կը սպասէ: Փորձեցէք անարտին հասցնել ձեր սկսած գործերը:



Այծեղջիւր

Անիմաստ խօսակցութիւնները եւ ձեզ հ համար ոչ համակրելի մարդոց հետ հանդիպումները շատ ժամանակ կը խլեն: Կեդրոնացէք ձեր ծրագիրներու իրագործման վրայ:



Ջրիս

Եթէ ձեր ներքին ձայնին ականջ տաք եւ ձեր երեւակայութիւնը օգտագործէք, ստեղծագործական կեանքի մէջ վերելք պիտի ապրիք այս շաբաթ:



Ձուկ

Վերամուտին նոր աշխատանքի առաջարկ պիտի ստանաք: Մի՛ տատամսիք, ինքնավստահ եղէք ու պիտի յաջողիք:



Սեան Ազարիկեան-Պարմաքզեան

ՎԵՐԱՄՈՒՄԻ ԹԵԼԱԴՐԱՆՔՆԵՐ



Վերամուտ է արդէն: Աշակերտներ երկար արձակուրդէ վերադարձած՝ դարձեալ պիտի կաղապարուին եւ աշխատանքի լծուին: Նախորդ տարեշրջանը պսակաձեւ ժառիր պատճառով բնականոն ձեւով չընթացաւ: Այս դպրոցական տարեշրջանին եւս, բոլորս դէմ յանդիման պիտի գտնուինք կարգ մը դժուարութիւններու: Ուստի որպէս ծնողք նեցուկ կանգնիք եւ օգնէք մեր զաւակներուն՝ հեզասահ տարի մը բոլորելու համար:

Բոլոր ծնողներուն փափաքն է աշխատունակ զաւակներ ունենալը, տեսնելու համար զիրենք հետագային լաւ դիրքերու հասած եւ ընկերութեան մէջ որպէս յարգելի եւ յաջող անձեր:

Շատեր սակայն կ'անգիտանան, որ իբրեւ ծնողք իրենք շատ կարեւոր դեր ունին եւ իրենց կեցուածքն ու վարուելակերպը մեծ ազդեցութիւն կ'ունենայ զաւակներու յաջողութեան վրայ:

Վերամուտի առիթով կու տանք մանկավարժներու թելադրանքներ, որպէսզի մեր զաւակները ըլլան «փայլուն» դպրոցականներ:

Խօսիք մեր զաւակներուն հետ

Ուսումնասիրութիւններ փաստած են, որ երբ ծնողք ժամանակ կը տրամադրեն եւ ամէն կիւրծի մասին կը գրուցեն իրենց զաւակներուն հետ, անոնք աւելի հարցասեր եւ հետաքրքիր կը դառնան եւ չեն բաւարարուիր սահմանափակ գիտելիքներով:

Կարդանք եւ խաղանք մեր զաւակներուն հետ

Փոքրիկին կողքը գետին նստելով մասնակցիք անոր խաղին կամ հաճելի պատմութիւն մը կարդանք մեր զաւակին հետ: Ընթերցումի ընթացքին միասնաբար պատկերներ դիտենք կամ մեկնաբանենք: Խաղն ու ընթերցումը հաճելի միջոցներ են երեխան զարգացնելու:

Օրինակ ծառայենք

Առհասարակ երեխաները հակամետ են ընդօրինակելու իրենց հայրերն ու մայրերը: Ծնողքին խօսակցութեան ոճը եւ գործածած բառամբերը մեծապէս կ'ազդէ փոքրիկին վրայ: Ան անմիջապէս կ'արձանագրէ եւ կը կրկնէ զանոնք: Նոյնպէս ծնողներու միջեւ վարուելակերպը, ուսուցիչին կամ տարեցներուն հետ վերաբերելու ոճը մեծ ազդեցութիւն ունին երեխային վրայ:

Գնահատենք մեր զաւակները

Որպէս ծնողք, փոխանակ տեսաբար մեր զաւակին սխալները մատնանշելու եւ քարոզներ կարդալու, ջանանք գնահատել անոր դրական կողմերը:

Սիրուած եւ գնահատուած երեխան միշտ աւելի ինքնավստահ եւ մտքով ու հոգիով աւելի առողջ կ'աճի, քան լքուած ու վարկաբեկուած երեխան:

Պատասխանատուութեան գիտակցութիւնը սերմանենք

Կանուխ տարիքէն մեր զաւակը պէտք է ունենայ որոշ պատասխանատուութիւններ եւ յարգէ ու իրականացնէ զանոնք: Օգնէք, որ ան ինքնաբար ըլլայ եւ քաջալերենք որ երբեմն առանձին աշխատի եւ յետոյ կատարենք միայն անհրաժեշտ ստուգումը: Մենք ալ մեր կարգին իրապաշտ ըլլանք, ճանչնանք մեր զաւակներուն կարողութիւնները եւ անկարելին չպահանջենք անոնցմէ:

Դասաւորենք երեխային կեանքը

Մեր զաւակին դպրոցական արդիւնքները մեծապէս կը տուժեն, եթէ ան կանոնաւոր ժամանակացոյց մը չունենայ եւ օրը դասաւորուած չըլլայ:

Գիշերը ուշ քնանալը, առտուն առանց նախաճաշի դպրոց մեկնիլը, առանց արտօնութեան եւ դասերը չաւարտած խաղալը անկազմակերպ վիճակ մը կը ստեղծեն անոր կեանքին մէջ եւ ժամանակի ընթացքին սխալ սովորութիւններ կ'արմատանան անոր մէջ:

Ուստի որպէս ծնողք հսկենք երեխային առողջութեան, քունին եւ սննդառութեան ու քաջալերենք, որ արտադպրոցական հետաքրքրութիւններ ունենայ եւ հետեւի ակումբի մը կամ մշակութային կեդրոնի մը գործունեութեան:

Երեխան պէտք է խաղն ու դասը, հաճոյքն ու պարտականութիւնները զանազան եւ իւրաքանչիւրին յարմար ժամանակ տրամադրէ:

Համակարգիչն ու արդի արհեստագիտութիւնը

Գիտակից ծնողքը փոքրիկը բոլորովին գրկելու փոխարէն, կրնայ յատուկ ժամ ճշդել պատկերասփիւռի, համակարգիչի համար՝ հսկելով յայտագիրներուն եւ խաղերուն որակին:

Բարի վերամուտ, հեզասահ եւ յաջող տարի մը կը մաղթենք ձեր բոլորին:

ԴՊՐՈՑԻ ՃԱՄԲԱՆ

3. Թումանեան

Ձմեռուայ բուքին, Սառնամանիքին Դպրոցի ճամբան Դժուար է, երկար՝ Շատերի համար:

Չուարթ գարունքին, Երգին ու ծաղկին Դպրոցի ճամբան Կարճ է, դուրալի Կարծես աւելի:

Իսկ ով սեր ունի Մեզ պէս ուսումի, Դպրոցի ճամբան Միշտ կարճ է, սիրուն՝ Ձմեռ թէ գարուն:



Ռաֆֆի Սիկատան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԻՆ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ հաւաքականի նախկին խաղացող Գեորգ Մարտիկեան նշանակուեցաւ Լաթաքիոյ Զըթթին ակումբի վարչական:

- Սուրիոյ Պասքեթի Դաշնութիւնը հրաւիրեց Ա. Ե. Բ. դասակարգերու մասնակից ակումբներու ներկայացուցիչները ընդհանուր ժողովի, որ տեղի պիտի ունենայ 20 Սեպտեմբեր 2020-ին, Դամասկոս:

- Լաթաքիոյ Զըթթին ակումբը երկրորդ տարին ըլլալով ֆութպոլի խումբին մարզիչ նշանակեց Զուսէյն Աֆաշը:

- Սուրիոյ հաւաքականի խաղացող Ումար Խուրեյպին Սեուտական Արաբիոյ Զիլալ խումբի պատասխանատուներուն տեղեկացուեցա՞ծ է, որ կ'ուզէ լքել կազմը: Սուրիացի խաղացողին հետ բանակցութիւններ կը վարէ Եգիպտոսի Չամալէքը:



մէջ, Եւ խումբը, իր կողքին, կարիք ունինք մէկայլ յարձակողական խաղացողի մը՝ աւելի աշխուժացնելու կազմին առաջատար գիծը: Զամակիրներու դաշտ ներկայանալու համար իտալացի մասնագետը ըսաւ, որ ժողովուրդին ներկայութիւնը կարեւոր է, որովհետեւ ան յոյս եւ թափ կուտայ խաղացողներուն, կարեւոր է նաեւ բոլորին առողջութիւնը, ուստի նրեկայութեան մեծ թիւ պահանջելը իրատեսական չէ:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՍԻՄՈՆԷ ՊՍԱԿԱՁԵՒ ԺԱՅՐՈՎ ՎԱՐՎՈՒՄԾ Է

Սպանիոյ Աթլետիքո Մատրիտի պատասխանատուները պաշտօնական կայքով յայտարարեցին, որ ֆութպոլի խումբի մարզիչ Սիմոնէ պսակա՞ծ է ժաիրով վարակուած է: Յայտարարութեան մէջ յիշեցին, որ խումբի բոլոր անդամները ենթարկուեցան Covid-19-ի քննութեան, եւ աւարտին ի յայտ եկաւ Սիմոնէի քննութեան դրական արդիւնքը: Բարեբախտաբար Սիմոնէ ոչ մէկ անհանգստութիւն ունեցաւ: Ան պիտի բաւարարուի 14 օր մեկուսացմամբ: Աւելցնենք, որ խումբը իր առաջին մրցումը պիտի ունենայ 26 Սեպտեմբերին, որմէ մեծ հաւանականութեամբ Սիմոնէ պիտի բացակայի: Մինչեւ օրս, Սպանիոյ ախոյեանութեան մասնակից խումբերէն 60 խաղացող վարակուած է պսակա՞ծէ ժաիրով:



ԼԱՌԹԱՐՈՅԻ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ ՊԱՐՍԵԼՈՆԱ ԺԱՄԱՆԵՑԻՆ

Իտալական Ինթեր Միլան խումբի խաղացող Լաուրաթո մարթինէզի գործատերերը Կիրակի օր ժամանեցին Պարսելոնա՝ բանակցութիւններ վարելու սպանական ակումբի ղեկավարներուն հետ: Ըստ տեղեկութիւններու, Պարսելոնայի նորանշանակ մարզիչ Զուսէյն, պատասխանատուներուն առաջարկած է կազմին միացնել Լաուրաթոն, որ իր հայրենակից Մեսսիին հետ պիտի գրաւէ խումբի առաջատար դիրքը: Զաթալոնէական Սփորթ օրաթերթը գրեց, որ Պարսելոնան Ինթերի ղեկավարներուն ներկայացուցած է Լաուրաթոն միացնելու առաջարկը, սակայն անոնք կ'ուզեն երկարաձգել արժանաթիւնի խաղացողին պայմանագրութիւնը մինչեւ 2024:



ՓԵՐԼՕ ԳՈՐ Է ԽՈՒՄԲԻՆ ԸՆԹԱՅԵՆ

Իտալիոյ Իւվենթոս խումբի մարզիչ Փերլօ իր գոհունակութիւնը յայտնեց մինչեւ օրս խումբին ընթացքին առնչութեամբ, ինչպէս նաեւ տեղի ունեցած բարեկամական մրցումներուն արդիւնքներուն համար: Շաբաթ օր Իւվենթոս բարեկամական մրցում մը ունեցաւ Նվարա խումբին դէմ, որ աւարտին հասաւ 5 - 0 արդիւնքով: Զանդիպոլմին առաջին կողմ նշանակեց Զրիստիանօ Ռոնալտօն: «Սքայ Սփորթ» օրաթերթին հետ իր գրոյցին ընթացքին Փերլօ ըսաւ, որ Զրիստիանօ Ռոնալտօ մեծ դեր ունի խումբին

Թիւ 23
Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:

8			♞			♚		8
7	♟					♟	♟	7
6	♙	♟						9
5		♝				♚		9
4		♚		♟				7
3						♙	♟	3
2	♙				♙		♙	2
1						♚		1
	a	b	c	d	e	f	g	h

Նախորդ Թիւի Պատասխանն է ♚ f 3 #
ՀԱՄԱՆՈՒՄԻ ճատրակի Յնձիւ.

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Առաքելեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ Բերիոյ Զայոց Թեմի Առաջնորդին Գեորգ Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեանին, Բերիոյ Զայոց Թեմի Ազգային Երեսփոխանական Ժողովին, Ազգային Վարչութեան, Կալուածոց Դոգաբարձութեան, Ազգային Մարմիններուն, ԴԵՄ-ի, Ազգային Զարէն Եփփէ Ծեմարանի եւ Զամագայինի Սեժ Ընտանիքներուն, եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց ամուսնոյն, հոր եւ զաւակին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՎԱՐԴԱՆ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

մահուան սուգին:
Զանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի (դռնփակ, միայն քահանաներուն եւ դպրաց դասուն ներկայութեան) Կիրակի, 20 Սեպտեմբեր 2020-ին, յաւարտ Ս. եւ Ամահ Պատարագի Ս. Զառասնից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ-Զալէպ:
Դոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի նաեւ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, նոյն օրը, ժամը 13:40-ին:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՑՄԱՆ ԱՐԺԵՔԸ



Snpj. Shghrasn Phyladets

«21 Սեպտեմբեր 1991, Խորհրդային Հայաստանի սոցիալիստական հանրապետություն - հարց՝
-Համաձայն էք, որ Հայաստանի Հանրապետությունը լինի անկախ, ժողովրդավարական պետություն ԽՍՀՄ-ի կազմից դուրս:
Արդյունքը. Այո՝ 2.042.627 99,51%, Ոչ՝ 10.002 0,49%»
Այսպիսով իր տրամաբանական ավարտին հասավ 1988 թուականի Փետրուարին Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու միտումով սկիզբ



առած Հայաստանի Հանրապետության վերանկախացման դժուարին, բայց անհրաժեշտ գործընթացը:

Դժուար ու բարդ պայմաններում տակ յառաջ եկած է Հայաստանի վերանկախացումը՝ Սպիտակի երկրաշարժին հետեւանքով երկրին մեկ երրորդը գրեթէ հիմնայատակ կործանուած, Ղարաբաղեան շարժման ղեկավարներու անհեռատես ու ապաշնորհ քաղաքականութեան հետեւանքով երկրի տնտեսութիւնը ամբողջովին կազմալուծուած եւ այլն. շատ խոստումնալից ապագայ չէր կանխատեսուեր Հայաստանի Հանրապետութեան համար այդ օրերուն, սակայն անկախութիւնը որպէս բացարձակ արժէք ընկալող հայ ժողովուրդը գնաց դէպի անկախութիւն:

Դեռափոթիք հայկական պետութիւնը, տակաւին անկախութեան առաջին իսկ օրերէն ենթարկուեցաւ ինքնադրստերման ձգտող Ատրպէյճանի յարձակման: Ի հեճուկս Ատրպէյճանի, հայկական բանակի փառահեղ յաղթանակին ուրուականը, ցայսօր հանգիստ չի թողուր մեր հակառակորդը:

Նախադարձակ Ատրպէյճանի կողմէ հրահրուած 2016-ի Ապրիլեան քառօրեայ եւ տոյն թուականիս Յուլիսեան պատերազմներու ձախողումները

պատճառ հանդիսացան, որ Ատրպէյճան վերջնականապէս կորսնցնելով իր ինքնուրոյնութիւնը, յայտնուի Թուրքիոյ բացարձակ ազդեցութեան տակ:

Ալիեւեան յանցաւոր խումբի (Նախիջեւանեան clan-ի) ամէն գնով իշխանութիւնը պահելու անթաքոյց մոլուցքը, առիթ հանդիսացաւ Թալիպերտողանեան Թուրքիոյ համար՝ ռազմական ու քաղաքական օժանդակութեան անուան տակ ներթափանցելու Ատրպէյճանի իշխանական մարմիններու բոլոր օղակներէն ներս, սկսեալ՝ տնտեսական օղակներէն, հասնելով մինչեւ բանակ, որուն վառ արտայայտութիւններէն մէկը վերջերս Ռեճեպ Էրտողանի մէկ ելոյթն էր, ուր կ'ըսէր. «Մենք երբեք չենք վարանիր դիմակայելու Ատրպէյճանի նկատմամբ կատարուած որեւէ ոտնձգութիւն»: Սա Երեւանի կողմէ անմիջապէս ընկալուեցաւ որպէս բացայայտ սպառնալիք՝ ուղղուած Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն դէմ: Բարեբախտաբար Հայաստանի պատասխանը չուշացաւ, երբ ՀՀ արտաքին գործոց նախարար Զօհրապ Մնացականեան իր Եգիպտոս կատարած պաշտօնական այցելութեան ավարտին, պատասխանելով թղթակիցներու հարցումներուն, յայտարարեց, որ Հայաստանի Հանրապետութիւնը տեղեկութիւններ ունի այն մասին, որ Թուրքիան օտարերկրեայ զինեալ ահաբեկիչներ կը տեղափոխէ Ատրպէյճան եւ որ Հայաստան ուշի-ուշով կը հետեւի Թուրքիոյ այդ արկածախնդրութիւններուն, որոնք ուղղուած են Հայաստանի եւ Արցախի դէմ:

Երկիրը ներկայիս զանազան ոլորտներու մէջ ունի անթիւ, անհամար մարտահրաւերներ, որոնք ոչ միայն արտաքին թշնամիներէն թելադրուած, այլ նաեւ մեր ներքին հարցերէն ծնունդ առած են: Այս բոլորը հրատապ լուծումներ կը պահանջեն, սակայն վերանկախացման տօնին գոյները չխտացնելու միտումով, ներքին հարցերէն անդադառնալք տողերս գրողին համար կարելորագոյնին՝ քանի մը անհամատեղելի ոլորտներ մէկ զամբիւղի մէջ մէկտեղել փորձող. այդպէս ալ ԿԳՄՍ (Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սքորտի) անհասկնալի նախարարութեան ձեռնարկած կրթութեան ոլորտի ձախողած «բարեփոխութիւններ»ուն (թելադրուած արտաքին ուժերէ), որոնց միջոցով կը փորձուի ազգային արժէքները նսեմացնելու գնով հաստատել մեր ազգի արժեհամակարգին անյարիր ընկերային չափանիշներ:

Ներքին քաղաքական հարցերը նոյնպէս զանց առնելով նշենք միայն, որ ի ուրախութիւն բոլորիս, ՀՀ բանակը հեռու է ներքաղաքական տարածայնութիւններէն եւ ամենակարելորդ՝ գերծ է արտաքին միջամտութիւններէ:

Այսօր վերանկախութեան երրորդ տասնամեակը բոլորած եւ մեր բազում սերունդներու իտեալը՝ Ազատ-անկախ Հայաստանը բացարձակ իրողութիւն է: Ինքնիշխան պետութիւն ունենալը ոչ միայն մեր ազգի գոյութեան իմաստն ու նպատակը դարձած է, այլեւ մեր ինքնութեան ու կենսակերպի գլխաւոր բաղադրիչն ու շարժիչ ուժը հանդիսացած է: Իսկ մենք, մեր բոլոր ներքին ու արտաքին հարցերով մէկտեղ, պարտաւոր ենք ունենալ՝ ամուր, մարտունակ ու թշնամիին նկատմամբ թե՛ գիտատեսակի առումով, թե՛ հայ մարտիկի պատրաստութեան առումով գերազանց բանակ, երկրի կայուն զարգացումը ապահովող տնտեսական աճ, ինչպէս նաեւ ներքաղաքական ու ներազգային հարցերէն վեր, ինքնուրոյն, բայց միեւնոյն ատեն ժամանակակից, աշխարհի փորձին հետ համընթաց զարգացող, սեփական, ազգային կրթագիտական համակարգ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

Հայաստանը միշտ սուրիահայութեան կողքին է:

Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան լուսարձակի տակ առաւ հալէպահայութեան դիմագրաւած անցնող ամիսներու դժուարութիւնները եւ համաճարակին պատուհասը, յիշելով որ Աստուծոյ օգնութեամբ կրցանք մեր ուժերը համախմբել եւ մեր միասնութիւնը պահելով համաճարակը դիմագրաւել: Ապա վերապատուելին իր ուրախութիւնը յայտնեց Հայաստանի Հանրապետութեան սուրիահայերուն զօրավիգ կանգնելուն համար եւ շնորհակալական խօսք ուղղեց Հայաստանի կառավարութեան:

Բերիոյ Թեմի Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Արիի. Տէր Պետրոս Արք. Միրիաթեան իր երախտագիտութիւնը յայտնեց Հայաստանի Հանրապետութեան, դիտել տալով որ հայրենիքէն հասած օժանդակութիւնը այլ արժէք ունի հայերուս համար:

Աւարտին Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Եպս. Զօպուեան դիտել տուաւ, որ հալէպահայութիւնը պայքարած է իր ազգային, եկեղեցական արժէքներուն պահպանութեան համար, անոր սիրտը կը տրոփէ հայրենիքի համար նաեւ: Մարդասիրական այս օժանդակութիւնը կարելոր է թե՛ նիւթական, թե՛ բարոյական առումներով:

Այս առիթով սրբազան հայրը կոչ ուղղեց կանգուն մնալու եւ որպէս սուրիահայեր մեր ներդրումը բերելու Սուրիական Հայրենիքին: «Այս օժանդակութիւնը կ'ամրապնդէ մեզ: Հալէպահայութիւնը պիտի շարունակէ այս օրինաբեր հողին վրայ ապրիլ եւ արարել», ըսաւ սրբազան հայրը: Ապա շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի Հանրապետութեան նախագահին, վարչապետին, հայրենի ժողովուրդին, ինչպէս նաեւ Սուրիոյ մէջ ծառայող

Հայաստանի Հանրապետութեան դեսպանին եւ Հալէպի Գլխաւոր Հիւպատոսին:

Ան կարելոր համարեց նաեւ Հայաստան, Արցախ, Սփիւռք միասնական գործակցութիւնը եւ գիրար օժանդակելու պատրաստակամութիւնը:

Աւարտին ներկայ ժողովուրդին բաշխուեցաւ օժանդակութեան առաջին մասը:

ՓՈՔՐԻԿ...

Սկիզբ՝ էջ 8

Կեանքի մայրամուտին հասած երբեմնի հսկային, որուն առջեւ ոչ մէկ բաց դուռ մնացած էր:

-Գո՞ն էք Ձեր պայմաններէն,- հարցուցի բան մը ըսած ըլլալու համար եւ հոգեկան ճմլումով մը, նաեւ շատ շուտ զղջալով տուած հարցումիս համար:

Ստացայ տարտամ պատասխան մը, որ յայտնապէս կ'անհանգստացնէր զիմ:

Յետոյ փութաց աւելցնելու.

-Անցած օր Վայոց ձորի մէկ գիւղը գացեր էիք: Մեզ հիւրասիրող գիւղացիներուն մէջ, կը պատկերացնէ՞ք, կը գտնուէին այնպիսիներ, որոնք ծանօթ էին իմ գրականութեան, կարդացեր էին գործերս եւ ազատ կ'արտասանէին անոնցմէ հատուածներ:

Սիրած խաղալիքը գտած մանուկի մը ուրախութիւնը կար ձայնին մէջ:

Արդարանալու եւ մխիթարուելու ձեւ մը:

Եւ ինչո՞ւ չէ: